Տուաւ ու ելով հոգի խաղաղութեան · Երթ առ արարիչըն հայցելով · ամ՛ն
իմ հանգո՛ · Ո՛ր ետուր հոգի յս · ըղ սա
պահեա՛ · զի քոյ խաչի և յարութեըդ հա
ւատաց Թագաւոր երկնաւոր · հանգո՛
զհոգի սորա՛ · յիշելով սորա՛ զհաւատս ։
՚Ի քաղաք ամ՛ն զօրութեց՝ և ՚ի քաղաք Թա
գաւորին մեծի · ուր ժողովք ալ ոցն
են ՚ի խաղաղութեան · զնմանէ յուսով ·
և հանգիցես ընդ հրեշտակաց դասու · ար
ժանել զկեանս յաւիտենից ։

Մերձեցաւ անձն իմ ՚ի հող յորմէ ս
տեղծեր զիս · և հոգւոյս մերկնեալ
յինէն · ամ՛ք զապաւինեալս յիշեա՛ ՚ի քում
գալըստեանն ։

փոլ ըստեանն ։ Մտերմութեան եմ անարատ ձեռաց քոց մի անտես առներ ։ այլ խնայեա՛ ցիս յահագին աւուրն ։ տր ։ Յորժամ գաս փառօք հօր դատել ըզ ամենեսեան ամ և հարկանի փող հընչման յարութեն ։ տր ։

Պայ զօրութեց թագաւորն ՚ի նորոգել զարարածս ։ ՚ի ձայն ահեղ բարբառոյ զարթուցանէ զննջեցեալսն ։ Դողան երկինք և երկիր յահէ փառաց քի ։ հուր բորբոքեալ ընթանայ ։ բոցակիզ է զմեղաւորսն ։ Նոր փեսուր զարդարին զասրք սրբոց կուսանացն ։ ուրախութեամբ մտանեն ՚ի յառագաստ փեսային ։ ՚Ի քեզ եմք ապաւինեալ ամէն օրհնեալ սրբութի ։ լեր բարեխօս անդադար վ՝ մերոյ փրկութեն ։

## Տեառն Ներսեսի ասացեալ աղօթարանէ ։

Անեղ անժամանակ հայր անըսկիզբն և անքանակ ։ որդւոյ պատճառ ծնընդեամբ անճառ հոգւոյն բըղխմամբ անքըննաբար ։ աղաչեմք զքեզ գըթած երկայնամիտ և ողորմած ։ ողորմեա՛ քոյ ստեղծուածոյս ՚ի քեզ յուսացեալ ննջեցելոյս

Բանդ որ 'ի ծոց հօր միածին և կերպա րան անկըղընամըղպին. որով երկինք գոյա ցան աշխարհ լրիւ հաստատեցաւ. հայ ցեմք 'ի քէն տէր և փրկիչ ամէն ողորմ և կեցուցիչ. ողոր.

Գերագոյն շնորհաց բաշխող երկնաւո րաց և երկրայնոց. կեանք և կենաց տը ւող հոգի հօր և որդւոյ արարչակից. խընդրեմք 'ի քէն աղբիւր բարեաց ար բուցանող ծարաւեաց. ողոր.

Դաւանեմք ընդ սրօբէից զկենդանարարդ համայնից. երեք սրբեան մի տէրութիւն հայր և որդի և տէր հոգի. յոր հանգուցեալս մկրտեալ և հաւատով խոստովանեալ. ող.

## Կանոն առաջին երեկոյեան շաբաթուն.

Որ ստեղծմամբ ըստ պատկերի քո տէր պատուեցեր զմեզ. ընկալ և այժմ զնընջեցեալսն 'ի քեզ ուղիղ հաւա տով ըստ մեծի քում ողորմութե.

Որ շնորհօք տէր հոգւոյդ լուսաւորեցեր. յիշատակի խուրեանց զհոգիս նց ընկալ մարդասէր. ըստ. Որք հաղորդեցան մարմնոյ և արեան քոյ տէր. հանգո՛ զհո գիս նց ընդ սրբս քո քս ած քանզի գինք տր արեան քոյ են.

Յարուցելոյն 'ի մեռելոց բնակարան. մայր և կոյս որ զնընջեցեալսն յաղա

մայ

մայ կենա՛ գործ է անապական. զքեզ մեծացուցանեմք որ օրհնեալդ ես ՚ի կանայս: Արարողին երկնի և երկրի եղեր տաճար և առագաստ. որ զննջեցեալսն մեր հրեղէն նորոգե. զքեզ. Կերակրողին տիեզերաց արբուցեր զքո ծ̃բ ըզ կաթն. որ զննջեցեալսն մեր վերստին նորոգե. զքեզ:

Հայր բազում ողորմ. խոստովանիմ առ քեզ ոպ̃ զանառակ որդին. Թող ինձ զմեղս իմ և ողորմեա՛: Տէր որ գթացար ՚ի կինն քանանացի. գթա՛ և յիս ՚ի մեղաւորս և ողոր: Տէր որ դարձուցեր զմաքսաւորն ՚ի գ̃տութն ճշմարտութն. դարձո՛ և զիս զմոլորեալս և ողոր:

Սէ խաչն օգնական հաւատացելոց. կանգնեցաւ ՚ի յերկրի յաղթող թշնամւոյն եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Արարիչն ած̃ բարձրացաւ ՚ի խաչին և զմեռեալս մեղօք փայտին ճաշակմամբն. ՚ի սմա նորոգեալ կենդանացոյց. ՚ի միւսանգամ գալըստեան ած̃ որդւոյն. սբ̃ խաչն երևի և լուսաւոր է. զի նա է յոյս հաւատացելոց:

Հաշտեաց ՚ի ձեռն սբ̃ մարմնոյ և արեան քոյ տ̃ր. և պարգևեա՛ ն̃ց դասիւ յաջակողմանըն քում:

## Ն՝րգ Սներսէսի տառդեալ.

Երրեակի թիւ կատարեալ. յէ րիս անձինս բաժանեալ. միու թբ միաւորեալ. միով բնութբ հաւատարեալ. յորմէ կապեալք և արձակիմք, և վերստին ան լուծ կապիմք. ողորմեա՛ քո։

Զեակիցդ ընդ հօր զորդի. փառաւո րեմք ան լռելի. որ իջեր յարգանդ կուսէին. զադամային առեր մարմին. աղա չանօք ծնածնին. անապական քում ծնո ղին. ողորմեա՛ քո։

Երևեցար մարմնով երկրի. որ ՚ի հօրէ ան մեկնելի. ընդ հողեղէնս բնակեցար. ՚ի հրեղինաց երկիր պագեալ. պաղատա նօք երկնաւորաց. փառաբանից քոց հրեշտակաց. ողորմեա՛ քո։

Ըստ օրինացն մովսէսի. ընծայեցար ՚ի տա ճարին. զի զբնութիս մարդկային. ըն ծայեսցես հօր ՚ի յերկին. խնդրուածովք մեր ծերունւոյն. քև ՚ի կապից արձակե լոյն. ողորմեա՛ քո։

Թագաւորդ հրեղինաց. որ ընդ մարդ կան հողեղինաց. շրջեցար անօրինաբար կրեցեր զկիրս մարդկաբար. ո՛ր վն մեր զայս ամ. ՚ի յանձն առեր խոնարհու թբ. ողորմեա՛ քո։

Ժողովեալք

Ժողովեալքս 'ի հրաժարումըն ծառայի
քո աշխարհէ. հայցեմք 'ի քէն արտա
սուելով. և պաղատիմք զայս ասելով.
Ճանապարհ ընդ քեզ ելեց. հանգուցե
լոյս լեր ուղեկից. 'ի յօթեւանս հօր քո
լուսոյ զննջեցեալըս մեր հանգո՛:

'Ի փրկութեն մերոյ սկըզբան մկրտեցար
'ի յորդանան. զոր շնորհեցեր նոր աւա
զան 'ի մաքրութիւն մեղաց մարդկան. հայց
մամք կրկին կարապետին մեծին 'ի
ծնունդս մկրտչին. 'ի յօթեւա.

Լուսաւոր ձայնիւ յերկնից զքեզ դաւա
նեաց հայր էակից. աղաւնակերպ հոգին
իջեալ առ համագոյդ իւր հանգուցեալ.
զմկրտեալս նովին հոգւով. յորդեգրու
թին հօր հաւատով. 'ի յօթեւ:

## Ս ենորդ ցերեկոյեան շուրջան աչառնոնջ ույապէա. ոն.

Արարիչ ած և ըստեղծիչ ազգի մարդ
կան. մի անտես առներ զննջեցեալսն
մեր. այլ հանգո՛ զհոգիս նց ընդ սրբս քո:
Որդիդ միածին յարութի տիեզերաց.
մի անտես առներ զննջեցեալս մեր:
Հոգիդ ճշմարիտ մխիթարիչ սգաւորաց.
մի անտես առներ:

Ուրախ լեր ածածին տաճար անխախ
տելի. զքեզ մեծացուցանեմք: Յղա
ցար

ցար անարատաբար. և զնա մայրեկհապե-
ծնար. ուրախ։ Երգէ մարգարէն որ
է տաճար քո սքանչելի արդարութբ և
դուռն երկնային. ուրախ.

Ո՜վ կենցաղոյս համապաղ զխս ալէ
կոծէ. Մրրկեալ ալիք թշնամին
ինձ յարուցանէ։ Նաւապետ բարի լեր
անձին իմոյ ապաւէն։

Սեղան քո մի զօրութէց հաւատով
կանգնեցաւ 'ի խորանի քում. եկայք
Ժողովուրդք երկրպագեսցուք։ Վեմ պա
տուական 'ի խորանի քում հիմնեցաւ այ
սօր. եկայք. 'Ի սմա մատուցաւ Ճշմա
րիտ պատարագ և զենումն անապան. եկ.
Զարհուրեալ դողան արարածք 'ի ձայնէ
սրբէնագոչ փողոյն. յորժամ հարկանէ
հրեշտակապետն և կոչէ 'ի դատաստան
զազգս ողդւոց մարդկան. յայնմ աւուր։

## Կ՛րգ տաւնէալ 'Ներսեսեան հոյրա պետոյն.

Խաւար մեղաց հալածեցաւ լոյս գի
տութեն քո ծագեցաւ. խայթուած
օձին բժշկեցաւ հիւանդութին մեր ողջա
ցաւ. կենդան արարդ մեռելոց և լուսա
տու խաւարելոց. 'ի յօթեվ։
Ծագումն անուն առ 'ի հօրէ որ ընտ
րեցեր 'ի յաշխարհէ լուսաւորիչ տիեզե
րաց

լուց զգաստ ընտրեալ աշակերտացն․ աղա
ջանօք առաքելոցն փող յարութե մեր
եղելոց․ 'ի յօթնել։

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ․ որ ըս
տեղծեր զմեզ 'ի հողոյ․ նորոգեցեր դար
ձեալ կրկին ծնընդեամբ սրբոյ աւազա
նին․ զոր կեցուցեր շնորհիւ քոյին 'ի մա
հուանէն այն առաջին․ 'իյօթնել։

Հոգւով լցեր զմարդն առաջին․ զոր
կորուսեալ խաբէմամբ չարին զնոյն հոգի
բանիւ քոյին հեղեր յոգիս մեր վերստին․
նովին հոգւով մզ և բարի առաջնոր
դեա հոգւոյ սորին․ 'իյօթնել։

Զայնեցեր առ ղազարոս որով եւտուր
մեռելոց յոյս․ կենդանութե չորեք օրե
այն կենդանացան որք յադամայ․ կենաց
ձայնիւ վերջին փողոյ կոչեա զաս յայսմ
հոգոյ․ 'ի յօթնել։

Ղօղեալ սարսեաց պահակ մահու 'ի կե
նարար ձայնիդ լոյս․ արագապէս զոյգ
ընդ բանին եւ զմեռեալն ըստ հրամա
նին․ իշխանք օդոյս այս սարսեացին զհո
գի սորա մի արգելցեն․ 'իյօթնել։

## Ն[illegible] Երեքնոյեն շարական․ ԸԷ․

Որ կոչեցեր առ քեզ մր զտիեզերա
ծմ․ ընկալ զմեր զննջեցեալսն 'ի գոգ
հայրապետին աբրահամու․ ողորմած մր
փրկիչ

փրկիչ և բարերար։ Ո՛ր թողութեանց ես տըւօղ ամ. Թող զմեղս մեր ննջեցելոցն կարօղ յամէն և հզօր. ողոր։ Որ լուսաւոր ես տիեզերաց քս ամ. լուսաւորեա և զմեր զննջեցեալսն լուսով երա

նաւէտ զբուարթնոցն. ողոր։

Մէ և ամենին մարթամ ցանկալի կուսից և պարծանք ազգի մարդկան. մայր և աղախին մեծացուցանեմք։ Անկեղծերբենի և տաճար ընդ հանուր լուսոյն. անարատ և անխախտելի կուսութի. մայր։ Խորհուրդ կենաց և մայր կենդանութեն. և տառագաւորս հրափայլ ծագմամբ. մայր։

Պարծա՛ զցաւօտումն քո ի մէնջ յաղագակել հողեղինացս. բազմագութ ամն խնայեա և մի կորուսաներ։ Կանգնեա զանկեալս 'ի գլորմանէ զվերաւորեալս 'ի թշնամւոյն. որ բժիշկդ ես հիւանդաց բըժշկեա զիմ զհիւանդութիւն։ 'Ի յանցանաց իմոց թախծեալ անձն իմ գոչեմ առ զմաքտաւորն. ամե քաւեա զիս զմեղաւորս։ Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա զմեր զննջեցեալսն. յորժամ գայցես անճառ փառօք հատուցանել մարդկան գործոց. և մեր ննջեցելոցն շնորհեա

գտանել ընդ ոչ քո։

[illegible]

Ճանապարհ մոլորելոց. և ճառագայթ խաւարելոց.

խաւարելոց. հրաւիրեցեր զորդիս լու-
սոյ 'ի յերկնային հարսանիս քո. ընդ զո-
ւարճալից անդ ժողովոց. արժանացոյ
զմա՛ դասուց. ընլապտերօք մոյծ յաւա
գաստ ընդ իմաստուն ն՟ք կուսանացն.
Մերով բնութե՟ զոր զգեցար 'ի փայտ
խաչին բեւեռեցար. լուծանելով զմեզ ի
մեղաց ինախահօրն կապանաց. լոյծ և զմա՛
իյանցանաց վ՟ քո ն՟ք չարչարանաց. լի.
Ցեռ կամաւոր մահու խաչի եդար 'ի
նոր գերեզմանի. երեք օրեայ թաղմամբ
յերկրի նոր ըստեղծեր զմեզ կենդանի.
չի իջեալ ընդ քեզ 'ի հող մահու վերա
կոչեա ձայնիւ փողոյ. լի.
Նստեալ կանանցն իւղաբերից և ողբ
ային արտասուալից. իբր զմեռեալ ան
յուսալից զկենդանիդ յաւիտենից. վ՟
նոցին ն՟ք արտասուաց մաքրեա՛ զմա՛ 'ի
յանցանաց. լի.
Շարժեալ հիմանցն դժոխոց. 'ի տեսա
նել զքեզ ներքնոց. հաներ զհանգիստ
որք 'ի բանտին կապեալ զիշխանն մահա
ծին. ընդ հանգուցեալ հոգիս սրբոց
հանգո՛ զհոգիս ննջեցելոց. լի.
Ուրախութե՟ զօրք երկնայինք յերկնից
յերկիր իջանէին. յորժամ յարեար 'ի մե
ռելոց լոյս ծագեցար արարածոց. ն՟ք
յարութե՟ քո կենարարաւ յարո՛ զմա՛'ի կեան
անմահ. լի.

Զընծանգուրժեալ պահապանացն 'ի յեր-
կիւղէ երկնաւորացն. որք զաւետի-
տային կանանց թէ մահ լուծաւ մահ
կանացուաց. սա՛ որ մահու քոյ ընկա
կից լեցի կենաց հողորդակից. լծ.

Պարակցեալ անմարմնականքն առ կին
աստու մը զերեզմանն տան զաւետիս
ազգի մարդկան վ՛ս կենացն յաւէժական.
դասաւորեա՛ պարուց նոցին զնընջեցեալս
յօրն վերջին. լծ.

Զահաւորեալ նշան խաչին յարեւելից
փայլեալ ծագի. հաւատացեալքն 'ի քեզ
բերկրին եւ ուրացողքն կոծեսցին. զեր
կրպագուս սրբոյ խաչին պայծառացո՛
լուսով նորին. լծ.

## Ր. ՁՆ շարական. գջ.

Ո՛ր հայրական իշխանութի՛ւ եւ փառօք
գալոց ես տ՛ր. նըստելոց ես դատա
ւոր հանդերձ քո առաքելովք. եւ առնես
զհատուցումն քոց արարածոց. Ո՛ր լու-
սափայլ ճառագայթիւք նշանաւ սրբոյ
խաչին յահաւոր բեմին բազմիս. եւ ընտ
րես զօդիս յայծեաց. եւ առնես զհատ.
Արդ աղաչեմք զքեզ ք՛ս որդի ա՛յ. հան
գո՛ զմեր ննջեցեալսն 'ի վերինդ յեդեմ.
զի մի՛ դարձցի ընկանել ամաչեցեալ 'ի
յաւուր ահեղ ատենին.

Ահագին է օրըն դատաստանին. և դողումն առաջի բեմին. սարսափին՝ հրեշտակք սասանին երկիւր. զննջեցելոյն մեր մի անտես առներ. յահագին աւուրն դատաստանին. բարեխօսութբ մր ածած-նին. Բանին դրունք երկնից բարբառին հրեշտակք. բանին գերեզմանք, բոլորովքն գենեան. զննջեցելոց. Դալարին եր-կինք ոչ մագաղաթ. գերագոյն գոչէ փող գործիւլեան. գերապանծ լուսով զարդարին արդարքն զննջեցե.

Դասապետքն երկնից դասուց հրեշտակաց, դասս՛ կարգէ զննջեցելոյն մեր, դասակից լինին զուարթնոցն երկնից. զննջեցելոյն մեր միայն տես առներ։

## Ր.ԺԸ շարական.

Անսկիզբն ած սկիզբն արարչութեն 'ի հողոյ ստեղծեր զմարդն առաջին. գործել և պահել յանպատում 'ի կեանս. իսկ 'ի ստունգանել հրամանի քոյ մր. զվճիռ մահու 'ի վր եդեալ. հող էիր անդրէն և 'ի հող դարձջիր. և այժմ աղաչեմք զաստեղծօղդ ամենից. ընկալ և հանգո՛ զհրաժարեալ հոգիս. յեօթն աստղեան լուսեղէն խորանս ուր ժողովքն են սրբոցն 'ի խաղաղութե. հոգւով հեղութե յերկնից բարութեան. Ոսկի եղեալք անպիտանացայ. գեղեց կայամար չքնո-

ծոյս քահանայութեան. իմաստութեան յիմարեցա՛ ՚ի յալեաց մեղաց յոր ընկղմեցայ. և այժմ Կոչողդ եհաս վերին կոչողին. կոչնատէրն անեղ կոչողն ահաւոր. դատաւորն անա չառ դատաստանն արդար. հրեշտակք ան ողորմ դատեն զմեղաւորս. և այժմ:

## Շարական գերեզմանի օրհնելոյն տաղ.

Գ Կ.

Յանըսկըզբնական ծոցոյ հօր խո նարհեալ բանդ մարմնացար կուսէն վասն փրկութեան մերոյ. աղաչեմք զքեզ զննջեցեալսն մեր ՚ի քեզ ուղիղ հաւատով յիշեա՛. զոր յորժամ գաս թագաւորու թեամբ քո: Անոխակալ քաղցրութեամբ որդի այ հաճեցար բառնալ զմեղս աշխարհի քո խաչելութեամբ. աղաչ: Կամաւորական մահուամբ քո լուծեր զերկուսս մահու և արժանի արարեր թողութեան յանցա նաց քաւիչ քո արեամբ. աղաչ: Որ փո խանակ մեղաւորաց զմեռանիլ յանձն ա ռեր. իջանելով ՚ի դըժոխս փրկեցեր ՚ի մեղս ասէր բանտէն զգերեալսն. աղաչ: Բարեբանեմք զանչափ քո զմարդասիրու թիւնդ. որ երեք օրեայ յարուցեալ. զկեն դանութիւն պարգևեցեր աշխարհի. աղ: Ցօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթ նոցն.

նոցն՝. նիւթեղէն սրբէ զեղ մարգար-տափայլ հիմն եկեղեցւոյ՝. մաքուր ա-ղաւնի ամպ հովանաւոր որ կոյս մա-րիամ. առ ծնեալն 'ի քեն.

## Երգ ՙՆերսէսի հայրապետին ասա-ցեալ:

Ոա՛հ ծործել երկնաւորաց զան ա-ռաջի քո նախընթաց. զընտրեալս քո ժողովելով քեզ ընդ առաջ բերեն ամպով. ընդ աղաւնեաց օդապարիկ խառնեա՛ զամ որ նրամբ. գոհասաւորեա՛ զամ վերնոցն երգել քեզ փառս ընդ զըւարթնոյն.

Սարսափին տարերք երկրի յորժամ փո-ւռք զաս հայրենի. արեգական լոյս խա-ւարի լուսինն աստեղքն նըւաղին զամ յաւուրն աներեկի լուսաւորեա՛ լուսով քոյին. գաասաւորեա՛.

Վերնական զօրացն պետ. փողէ զբար-բառ աւետաբեր ա՛րիք մեռեալք որք յադամայ քանզի ահա՛ եկն փեսայ. ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց կալցեա՛ զամ 'ի թիւ սրբոց. գաասաւորեա՛.

Տիրական աթոռ նստի յարարածոց եր-կրպագիս. ա՛րդարութի՝ զաշխարհ դա-տես. վարձս ըստ գործոց հատուցանես. յայնժամ շնորհեա՛ ողորմութի՝ նը՛ջե

ցելոյ

ցե՛լոյս մեր զթողութի՛. դասաւորեա՛:
Րամեալ մարդկան ազգ ժողովին որք
յադամայ ծնեալք լինին. և հրեղինաց
դասք երկնային համանգամայն վայելաբե
րին. 'ի յայնմ ահեղ հրապարակին յիշեա՛
զսա՛ յօրն ահագին. դասաւորեա՛:

Ցուցանին գաղտնիք մարդկան իւրաքան
չիւրք որք գործեցան. բարեաց գոր
ծողքն պսակին չարացն 'ի հուրն անշէջ
մատնին. յայնժամ յիշեա՛ զողորմաբարին
գործս մեղացն ջնջեսցին. դասաւոր:

Ւիւսին պսակք զանազանեալ. և պատ
մուճանք լուսափայլեալ. որ վկայիցն 'ի
գլուխ եդեալ և արդարոցն զարդարեալ.
հաղորդս արա՛ հայցմամբ նոցին զսա՛ լու
սոյ փա՛ռաց նոցին. դասաւորեա՛:

Փա՛ռաց 'ի փառս բա՛րձրեա՛ն աջա
կողմանքն վերանան. յորժամ լսեն զերա
նական ձայն օրհնութե՛ 'ի քէն կողման.
ննջեցելոցս մեր լսեցո՛ զձայնին բար
բառն քո՛. դասաւորեա՛:

Քա՛հանա՛յք և ժո՛ղովուրդք հայցեմք
'ի քէն տէր բարեգութ. ընդ ննջեցելոց
հաւատով ընկալ զմեզ նովին յուսով.
յերուսաղէմ քաղաքն վերին յորում ս՛ր
բարքն ժողովին. փառաւորել միշտ ընդ
նոսին երրորդութեան երրեակ անձին:

Եղանակ.

## Նշանակ. հրեշտակաց որ է ասա ցեալ օր ծննդեան.

Փառք 'ի բարձունս ա՟յ. և յերկիր խաղաղութ՟ն մարդկան բարեկամաց։ Օրհնեմք զքեզ. Գովեմք զքեզ։ Երկիր պագանեմք զքեզ. Փառաւորեմք զքեզ. Գոհանամք զքեզ. վ՟ս մեծի փառացդ.

Տ՟ր ա՟ծ Թագաւոր երկնաւոր ա՟ծ հայր ամենակարող.

Տ՟ր որդիդ միածին յ՟ս ք՟ս.

Տ՟ր ա՟ծ գառն ա՟յ և որդիդ հօր.

Որ բառնաս զմեղս աշխարհի ողորմեա՛ մեզ։

Որ բառնաս զմեղս աշխարհի ընկալ զաղաչս մեր.

Որ նստիս ընդ աջմէ հօր ողորմեա՛ մեզ։

Քանզի դու միայն ս՟բ.

Դու միայն տ՟ր.

Դու

Դու միայն բարձրեալ ես Քս։ Ընդ որ հոգւոյն 'ի փառս այ հօր. ամէն։

## Դաւանութիւն տառացեալ երկոտասան առաքելոց.

Հաւատամք 'ի մի ած հայրն ամենակալ. արարողն յերկնի և յերկրի. երևելեաց ամի և աներևութից։

Եւ 'ի մի տր յս քս որդի այ և միածին։

Եւ 'ի հօրէ ծնեալ առաջ քան զամ յաւիտեանս։

Ած այ լոյս 'ի լուսոյ, ած ճշմարիտ այ ճշմարտէ։

Ծնեալ և ոչ ար[illegible]եալ համագոյակից հօր. որով ամ ինչ եղև։

Որ վս մեր մարդկան և վս մերոյ փրկութեն, իջեալ յերկնից. և մարմնաւորեցաւ 'ի հոգւոյն սրբոյ, և 'ի մարիամա կոյսէն, և մարդ եղեալ.

Խաչեցաւ ևս վս մեր 'ի ներքոյ պոնդացոյ պիղատոսի. չարչարեցաւ և թաղեցաւ։

Եւ յարեաւ յաւուր երրորդի ըստ գրեցելոց։

Եւ համբարձաւ 'ի յերկինս նստաւ ընդ աջմէ հօր.

Եւ գալոց է փառօք դատել զկենդանիս. և զմեռեալս, որոյ թագաւորութեն ոչ լինիցի վախճան։

Եւ

Եւ հոգին որ և ՚ի նմը · և կենդանարարը
որ ՚ի հօրէ և որդւոյ բղխէ ·

Որ ընդ հօր և ընդ որդւոյ ՚ի միասին եր
կրպագի, և փառաւորի որ խօսեցաւ
մարգարէիւք ·

Եւ ՚ի մի սրբուհի կաթուղիկէ և առաքե
լական եկեղեցի ։

Խոստովանիմք ՚ի մկրտութն և ՚ի թողու
թն մեղաց ·

Եւ ակն ունիմք մեք յարութեն ընդ մե
ռելոց ·

Եւ ՚ի կեանս յաւիտենից · ամէն ։

ՄԲ տաղքաղձք ցասաւուրս ծնընդեան ·

Բազմութիւնք հրեշտակաց և զօ
րաց · երկնաւորաց · իջեալ ՚ի
յերկնից ընդ ըմիածին ։ Թագա
ւորին ։

Որք երգէին և ասէին սա՛ է որդին ած ·
ամենեքեան առաւօտուք · ուրախ լերուք ·
երկինք և ցնծասցին հիմունք աշխարհի ·
Զի ած ընդ՛ յաւիտենական · ՚ի յերկրի
երևեցաւ · և ընդ մարդկան շրջեցաւ ·
զի կեցուսցէ · զանձինս մեր ։

Ո՛ր վերայ նստիս ՚ի կառս հրանիւթս ·
քառակերպեանս ։

Ընծայեցէ՛ · բանըդ ձըծ ·

Այսօր իջեալ ՚ի յերկն այնոցընը վասընը
քո

քո արարածոցս․ յանձն առեր բազմիլ
ընդ աշակերտսն ։
Եւ սերոբէքն և քերոբէքն հիացեալ
զարմանային․ և պետութիւնք վերին զօ
րացն ընթանչացեալ աղաղակէին ասելով․
Սբ․ Սբ․ Սբ Տր զօրութեանց ։

ՍԲ տասցուցին ցուցուցին նա հում
երրորդ ձայն․

Ով է որպ Տր Աճ մեր ։
Խաչեցաւ վս մեր․ թաղեցաւ․ և
յարեաւ հաւատարիմ եղև յաշխարհի ։
և համբարձաւ․ փառօք ։
Եկայք ժողովուրդք․ զօրհնութիւն ընդ
հրեշտակս երգեսցուք նմա ասելով․
Սբ․ Սբ․ Սբ ես Տր Աճ մեր ։

ՍԲ տասցուցին հատարտնոյ ներտնենց
Հրեշտակային կարգաւորու թէ․
Ընծայեր Աճ ։ Ձքո Տր զեկեղեցի․
Հաղալըք հաքըրաց հրեշտակապետըք կան
առաջի քո ։ Եւ բիւրք բիւրուց․ հրեշ
տակըք պաշտեն զքեզ Տր․ և ի մարդկանէ
համեցար ընդունիլ զօրու թիւն ։
Զայնիւ խորհրդականաւ․ Սբ․ Սբ․ Սբ
Տր զօրութեանց ։

Սրբութիւն սրբոց․ մեծ ես և ահաւոր ։
Եւ զինուորութիւնք հրեշտակաց․ որհ
նեն զքեզ և ասեն ։ փառք ՚ի բարձունս
Այ․ և յերկիր խաղաղութիւն․ Վը

Ս՞ յիշատակի հանգուցելոցն ընկալ
հայր մե՛ր մարդասէր. զպատարագս
Եւ համարեա՛ զհոգիս նց. ՚ի թիւս սրբոց
քոց յարքայութեն երկնից։ Մանա
ւանդ. զի հաւատով մատուցուք զպա
տարագս. հաշտեսցի ածութեն. և հան
գուսցէ զհոգիս նց.

ՄԲ տաղաւարէն առաւօտելոց և մօր
գալէէից։

Ամենակալ ես տր. զօրութեն որ թա
գաւոր ես յաւիտենից.
Ո՛ր նստիս յերկնից ՚ի յերկինս և լոյս
ծագես յարարածս քո։
Ո՛ր խոնարհութբ իջեր. ՚ի յերկիր. քեզ
պատարագս մատուցանեմք։ Եւ մե՛ զա
նուանդ քո. փառաւորեմք։ Տր որ պա
կիչ ես սրբոց առաքելոց։ Վն զի սո
քայեն մեզ բարեխօս. տր ամենակալ ՚ի
քում յարքայութեն ։ յալէլ. յալէլ.
յալէլ։ Նոմ. Ողորմեա՛.

ՄԲ տաղաւարէն.

Սբ. մբ. մբ. տր զօրութեց։ Լի են
երկինք և երկիր փառօք քո. օրհնու
թն ՚ի բարձունս օրհնեալ որ եկիր և գա
լոց ես անուամբ տն. ովսաննա՛ ՚ի բար
ձունս։ Հայր երկնաւոր որ զորդիդ քո
եստուր ՚ի մահ վն մեր պարտապանաց
պարտեաց

պարտեաց մերոց․ հեղմամբ արեան նր․ աղաչեմք զքեզ․ ողորմեա՛ քո բանաւոր հօտիս։

### 'Ի Ճշ դստոբտգէն․

Որ նախատ դաւն այ պատարագեալ․ և զխոցուածս գեղարդեանն առեալ 'ի կողն․ և զփրկական արիւնն էհեղ 'ի վր ամ տիեզերաց․ առաւել բարձր արարէք զնա յաւիտեան։

Որդի այ․ որ զպատարագեալ հօրն հաշտութն հաց կենաց բաշխիս 'ի մեզ․ հեղմամբ արեան քո նր․ աղաչեմք զքեզ ողորմեա՛ արեամբ քո փրկեալ հօտի։

Ցամի օրհնեալ ես տր օրհնեմք զքեզ․ գովեմք զքեզ․ գոհանամք զքէն․ աղաչեմք զքեզ տր ած մեր։

Հոգի այ․ որ զփառակիցն քո զխորհուրդ․ իջեալ 'ի յերկնից․ կատարես 'ի ձեռս մեր․ հեղմամբ արեան սորա․ աղաչեմք զքեզ հանգո զհոգիս մեր ննջեցելոցն․ ամէն։

### Շարական հաղորդութեն․

Քս պատարագեալ բաշխի 'ի միջի մերում․ ալէլուիա՛։

Մարմին որ տայ մեզ կերակուր և տր արիւն որ ցօղէ զմեզ․ ալէլ․

Մատիկ առ տր և առէք զլոյս․ ալէլ․

Ճաշակեցէք և տեսէք զի քաղցր է տր․ ալէլ․

Օրհնեցէք զՏր յերկնից. ալէլուիա։
Օրհնեցէք զնա ՚ի բարձանց. ալէլու։
Օրհնեալ Տր. օրհնեցէք զնա հրեշտակք
և ամ զօրութիւնք նորա. օրհնեալ է Տր։
Լցաք ՚ի բարութենէ քոց Տր ճաշակելով
զմարմին քո և զարիւն քո փառք ՚ի բար
ձունս կերակրողիդ որ հանապազ կերա
կրեսցէ զմեզ. առաքեա ՚ի մեզ զհոգևոր
քո զօրհնութիւն փառք ՚ի բարձունս կե
րակրողիդ զմեզ։

Այսօր հաշտի Տր ընդ արարածս. ալէ.
Եւ ընդ մատուցմամբ սբ պատարագիս. ալ։
Այսօր իջեալ հոգւոյն սրբոյ. ալէլու։
՚Ի վերայ մարմնոյ և արեան Տն. ալէլ։
Այսօր արբին սբ առաքեալք. ալէլ.
Եւ արբուցին տեղերաց. ալէլուիա։
Լցաք ՚ի բարութենէ քոց Տր ճաշակելով
զմարմին քո և զարիւն։

## Շարական սբ Հոգւոյն.

Արարիչ և մարդասէր անոխակալ և բարերարութ. որ գովիս ՚ի սրբ
րեց Տր դատաւոր արդարութե ընդ սրբոց առաքելոց Տր պսակեա զմեր ննջեցեալսն. ողորմած Տր ողորմեա հոգւոցն մեր ննջեցելոց։ Յորժամ գրեալ քըն կատարին որ զայնմ աւուր մեզ պատմեցին. մարգարէից բանքն յարգին առաքելոցըն վկայարին. ողորմած ։

Տր ողորմեա՛ . հոգւոց մերննջեցելոց . ամէն։

## Երեք շաբաթին.

Ի վերինն էջմ 'ի բնակարանս հրեշտակաց. ո՛ւր ենովք և եղիաս կանծերացեալք աղաւնակերպ 'ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապես. ող. Թագաւոր փառաց քս. որ ժամանեալ գաս 'ի յերկնից. 'ի մէջ թևոց հողմոց քո հայրենի կերպարանօք. և առնես հրա փորձութիւն գքն ընութին որդւոյ մարդկան. ողոր։

## Չորեք շաբաթին.

'Ի դնել բեմին բազմի փեսայն և առադաստն զարդարի. գաբրիէլեան փողն փչէ նրք ամ անդ հաւաքին. արդարոց դասքն բերկրին. իսկ մեղաւորքն թախանձին. ողոր։ Յորժամ հընչէ ըն փողոյն լինի և ղեաուկան գիրն յայտնի. Ծառագայթ սըրբոյ խաչին յարևելից փառօք ծագի. հրեշտակաց գունդք ծաւալին հրեշտակապետաց պարունակեն. ողոր։

## Հինգ շաբաթին առաւօտուն.

Ահեղ խորհուրդ քահանային բազկատարած կայր 'ի բեմին առաջի ՏԸ սեղանոյն. հուր չէջանի խաւար մերժի տրտմեալ հոգիքն ուրախանան. զի թողութիւն մեղաց լինի. Տրտմալ հաղորդ

չարչա

չարչարանօք. և անձն առեր զմահ խաչին. և փայտիւ բարձող եղեր վն յադամայ նախաստեղծին. ողոր.

## Ուրբաթի տաղն.

Մովսէս ծածախոտ և ահարոն ըղեւ տացին. մարգարէքն իՆ և քահանայք հին օրինին. յառաջագոյն մեզ ծանուցին զգալուստ ՏՆ միածնին. 'ի փրկութն մեզ յայտնեցին յանապատին կերակրելին. ողոր. Զարհուրեցան զօրք երկնայինքն յորժամ տեսին զտէրն 'ի խաչին. արեգական լոյս քողարկեալ. և լոյս լուսնին նսեմացեալ. յահեղ փառաց ած որդւոյն խաւար եղև ընդ տիեզերս. ողոր.

## Շաբաթի տաղն.

Աղաչանօք սրբոյ խաչին և ան բարեբա. բարեխօսին. և սրբոյ ածածին և յօհաննու կարապետին. և սրբոյն ստեփաննոսի և առաջին մարտիրոսի. և սրբոց առաքելոցն և համօրէն մարտիրոսացն, և սրբոյ լուսաւորչին հայաստանեայց հայրապետին. Ուրախացան զօրք ամ յորժամ լուան զքո յարութիւնդ. Նո փեսաւոր զարդարեցան 'ի յարութեն ՏԸ միածնին. ող.

## Երգ որ ասէն ընդ մատուցմանն առաջի պատարագին.

Որ գերագոյն քան զերկինս պայծառացուցեր

ուացուցեր Տր. զեկեղեցի․ յարեամբ քո
քո․ և ըստ երկնայնոցն կարգեցեր 'ի
սմայ, դասք առաքելոցն․ մարգարէից Տր
վարդապետաց․ այսօր ժողովեալք դասք
քահանայից․ սարկաւագաց․ դպրաց, և
կղերիկոսացն․ խունկս մատուցանեմք ա-
ռաջի քո Տր օրինակս մատուցանեմք ա-
ռաջի քո Տր օրինակս հնումն զաքարիայ․
ընկալար առ 'ի մէջ խունկս անուշ ոպ̃
պատարագս աբելին, և նոյեան և աբրա
համու․

Սպասաւորեալ աշխարհագրաւ ար
քայից 'ի բեթղեհէմ․ առ կուսի գրեալ
'ի մարգարէից 'ի քաղաք դաւթի․ 'ի
դուստրն դաւթի․ 'ի լրման ժամանակի
ծնեալ զՏր․ և զորդին դաւթի զոր ծնեալ
այսօր լուծեր զերկունս և այժ․ հայցեմ
վ̃ մեր ով կոյս աղերսելի․ ան շարժ պա
հեայ զեկեղեցի քո աշխարհի․

## Այլ շարական առաւօտ վարդապետաց եկեղեցւոյ․

Հոգոյն հնչմամբ քնար երգարան․ և
փող մեծաձայն․ հայր ամենաբան հեր
ձուածողաց բիւրոց հարկանող, և ճակա
տին գողիաթոյն նոր պարսաւ քարող մաղ
թեա մինչ առ քս հայրդ Տր գրիգորիոս․
Լինի բանի վեմ ան շարժելի որ հօր եա

կէց

կից յայտնեցեր զորդի, երկրորդ հայեալ
լանձնգքն յի· ըղձալուին ուսեալ ա՟ծաբանող
խորոց անճառելի մաղթեամ միշտ առ ք՟ո
թեւայ կոխ բանիւ լիապես լցել բար
բառով զերկիր· առաքելապես որ՚ խօսան
մեծի հօր եղեցի անօթ ընթրութեն ես
ըստ պօղոսի· մաղթեամ միշտ առ ք՟ո
թագաւորին յերկնից բնակարան և միու
թե բանին մարմին· ան շփոթ խառնա
րան զքեզ ա՟ծածին հայրքն հնչեցին
ա՟ծաբանեալ· ա՟ծ ո՟յ· հօրէ քո զորդի
հայցեմ ո՛վ կոյս տիրուհի զձեր քո աշ
խարհի։

## Ի․ԿԴ տառքս ներբողենից տառացին·

Տորաստեղծեալ բանն յանէից·
իսկ ըզբանէ զերկինս երկնից·
և զերկնային զօրս ան մարմնոց
իմանալեացըն զըւարթնոց· և
ըզ գալի տարբերց քառից հակառակաց
միաբանից· որով յաւէտ փառաբանի· եր
րորդութին անճառելի·

Երեք սըրբեան մի էութեն մի ով բնու
թէ ա՟ծութեն· լոյսն որ անեղ արարչա
կան ասաց լինիլ լոյս եղական· զոր և
ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւ
րակէին· որով յաւէտ փա։

Բաբուն օրէն բացայ տրեսցուք ըծած
կեալ

կեալ խորհուրդն ծանիցուք. զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի. 'ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեն որ ճառագայթ. եկայք փըրկեալք ընդ զըւարթնոյն տուք օրհնութին յարուցելոյն։

Աներդ սիրով խոնարհեցար 'ի փրկութին մեր մարմնացար. նովին մարմնովն խաչեցար 'ի գերեզման մահու եդար. այսօր յարեար ածաբար 'ի հրեշտակաց քարոզեցար. եկայք փըրկեալք։

Երևեցար խընկաբերիցն յողջոյն կենաց ուրախալից. և 'ի լերինն գալիլեայ առաքելոց մետասանից. արժանացո՛ զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրըն վերջին. եկայք փըրկեալք։

Սիոնի որդիք՝ զարթիք հարսին լուսոյ տուք աւետիք. եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութե՝. գայ պըսակէ ըզ քեզ փառօք և ընդ առաջ պըճնեալ զարդուք. երգեա՛ երգ նոր յարուցելոյն նընջեցելոց կենաց պըտղոյն։

Նահապետին աբրահամու հայցմամբ ընկալ զմեր զաղաչանս. և ծառայիդ քում սահակայ. խնդրուածովք 'ի մեզ գթա՛յ. և նա՛ տեսին իւր սիրով որդւոյն 'ի մեզ խնայեա՛. երեք որբեան երիւք որոցին որբեա՛

մերք արձակեցան. որ վերածեաց զինքն 'ի ծովէն սաստեաց ալեացն և լռեցին:
Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու սաստէր զխորհուրդն ոչ գիտելոյ. որով դառնայր և հնազանդիւր զոտս և զգլուխս մաքրել մաղթէր. գըլխոյս ասէ չէ ինչ պիտոյ լուացումն ջրոյ զի լուացեալ է. ոտիցդ պէտք են մաքրութն յօդիլ 'ի գլուխս սրբութն:

Դասուց իւրոց աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց. այսօր գործով զծայրագոյն եցոյց յինքեան զխոնարհութն. ապաստւորեալ հողեղինաց այն որ ան տեանէ հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծառայիցն այն որ պաշտին 'ի սրովբէից: Եթէ տրս ասէ էից և վարդապետս բոլորից. զաշակերտացդ և զծառայից զոտս լուացի 'ի հնոյ աղտից. միմեանց և դուք համաբնութբ ցուցէք զնոյն խոնարհութն. բարձրացելոյն 'ի կործանումն և անկելոյ բնութնդ կանգնումն:

Զոր մաքրեցեր յաւազանին մաքուր ձեռօք զոտս նոցին. և ուսուցեր խոնարհութբ յաղթօղ լինիլ չար հպարտին. և զիմ լըւա՛ զոտիցն մեղաց աղաչանօք սրբոց գընդին. և ըղ գընացս ուղղեա զոտսն խոնարհութբ ելիւք յերկինս:

Աւետարանս

# Աւետարան ըստ Յովհաննու.

## Ո՛չ է ծառայ մեծ.

Լըլէց զօրէնսն մօսիսի զոր խօսեցաւ 'ի սինայի. եկեր զգառն օրինակին և զբաղարջն ընդ եղեգբն. զհինն 'ի նորս փոխելով զստուերն 'ի լոյս ճշմարտելով փոխան գառին ինքն գոլով գառն այ նուիրելով։

Ընդ բաղարջին հաց առ խմոր եւ զմարմինն իւր զերկնաւոր. զկուսածինն անսերմնաւոր զանապական և զհոգևոր ընդ ոչխարին արեան ուխտին եւ մեզ զարիւն իւր ուխտ կրկին. և եղեգան դառնագունին փոխան զվարս ածային։

Թագաւորն արարածոց զհացն կենաց եւ քաղցելոց. և զբաժակն ուրախ արար որք յագամայ տրտմեցելոց. այս նոր ուխտ է իմոյ արեան փոխան հնոյ ուխտին արեանց. զոր յիշատակ իմ առնիցէք մինչև եկից ես միւսանգամ։

Ժողովեալքս 'ի քեն հայցեմք ընդ ժողովեալ մետասանին. որ զկենարարըդ քո մարմին բաշխեալ ետուր ընդ բաժակին. շնորհեա և մեզ տր ընդ նոսին հաղորդ լինիլ քում սեղանին կենաց հացիդ յոր փափագիմք և ըմպելոյդ ում ծարաւիմք։

'ի ընտրելոց աշակերտաց յուդաս մեկ
նեալ 'ի մեր գառանցն · զբարձօղ մեղաց
գառն այ մատնէր 'ի մահ ընդ արծաթոյ ·
'ի յընթրիսն հոգևոր մերձի ժպիրհն և
նենգաւորն · ուտելով ընդ վարդապետըն
յանձախէ զխաբէութի ։

Լոյսն խօսէր աղերսալի խաւարելոյն
վն դարձի · մի ոմն 'ի ձէնջ ասէ եղբարք
զիս մատնելոց է առ 'ի մահ · պետրոս
լըւեալ զայն զարհուրէր և ակն արկէր
առ յովհաննէս · հարցանել թէ ով իցէ
դաւաճանօղ վարդապետին ·

Խնամով սիրոյն յիւր սիրելեաց զտրտ
մութին փարատեաց · թացեալ պա
տառ տայ յուդայի նշանակեալ զգողն
մատնիչ · զոր առեալ և մերկացաւ յա͞ծ
ային հոգւոյն շնորհաց · մատնեցաւ նախա
չարին ընդ մատնութեն վարդապետին ,
Ծայրագոյն լուսոյն զրկեալ խաւարա
սէրն արտաքս ելեալ տ͞րն յայտնէր լոյս
եղելոցն · զգայթագղիլն 'ի գիշերին · պե
տրոս խօսէր խրախուսելի և կշտամբիւր
հաւախօսի · զծւրն յաշխարհէ զփոխիլն
ասէր և զգալուստ հոգւոյն պատմէր ։
Կենդրոնեան յայնկոյս ձորոյ 'ի վերնա
տունն ել խորհրդոյ · էմուտ պարտէզ
ընդ պարտի զի էմոյծ զադամ յադէն
դրախտին · մուծցես և զմեզ տ͞ր ընդ նմին
ուստի

ուստի հանէր նախ զառաջինն. զի ժա
ռանգել զհայրենին արժանասցուք մեք
վերստին.

Հոգայր զկրիցն տրտմաբար երիւքն ե-
ղեալ առանձնաբար. փրկել զաշխարհս
հոգիս յօժար բայց է բնութին մարմնոյս
տկար. ոչ ոմն ուժեղ և զօրաւոր և ոմն
անզօր վտանգաւոր. այլ մի և նոյն գոլ
միաւոր կրէր զկիրսն կամաւոր:

Զայնիւ մաղթէր աղօթական վն իմ առ
հայր իւր էական. ծունր դնէր խոնար
հական որում կրկնի ծունր ամ. եթէ
փրկիլ մարդկան հնարէ առանց մահու
իմ որ գրեալ է. բաժակ մահուս յինէն
անցցէ ոչ իմ կամաւ այլ քոյդ տեացէ:
Դողեալ յերկիւղ քրտանց հոսման ոլոռ-
նաձև կոյլակ վիժման. 'ի զօրանալ հրեշ
տակ մերձեալ զօրինական գիրն լըցեալ.
զի կատարեալ էառ զբնութին ամբըն
բան ըղ մարդկութեն. պարտէր զերկիւղ
և զըղստմութին յիւրումն կրել տնօրէ
նութն:

## Տաղ սուրբ ածածնին կուսին չոր չորքանոցին ժէ.

Նածին կոյս մարիամ. կա
ցեալ առ խաչ իւր միածնին
հեղյր զարտասուս. կոծ
մամբ

մամբ ՚ի լց և զայս ասէր ձայն ողորմելի.
այվու այվու. զքեզ խաչ տեսանողեդ հա
զար այվու այվու մօրս այրած սրտի։
Որդեակ որդեակ յն իմ որդեակ. աչացս
լոյս մօր քո կուսի իմ միածին գառն
անպարտական ընդ որ մեղաց կաս այժմ
՚ի խաչիդ. այվու։

Զտեսի չտեսի զբանն հրեշտակին չտեսի
որդեակ յաթոռն դաւթի. այլ կաս այժմ
՚ի խաչիդ. փոխանակ փառաց. այվու։
Տեսանել արքա՛ մայրս յուսայի և թագ
՚ի գլուխ պնծ՛նեալ պանծայի. և այժմ
փշով ես դու պսակած. քո լուս ով եր
եսդ ապտակով հարած. այվու։

Թագաւոր յաւիտեան ես զքեզ ծնայ.
և՛ իմոքուցն ընծայսն ընկալայ. օր ըստօրէ՛
յայնմ յուսայի. իմդ յուսո տիրել աշ
խարհի. այվու։

Հրեշտակք՛ի ծնունդ քո բարձին աղաղակ
խաղաղութի յերկրի հայնէին և արդ իմ
խռովեալ զ̃որդ իմ հարին. Թքոք զերեսդ
ան պարտ հաղեցին. այվու։

Եհաս բան քո սիոն ահա՛ սրով սիրտս
խոցոտի. զի միածինն ան պարտ տանջե
ցին կատականոք հեթանոսք հարին. այվու
կուսութբ ծնա՛ ամէին անուցի. ան մեղ
կաթամբ ես կերակրեցի. և այժմ մերկ
կաս նշաւակած. քացախ ընդ ջրոյ տան
քեզ ըմպելի. այվու։ Զենչ

Զինչ մեղար որդեակ. կամ զինչ գործե
ցեր. զջուրն 'ի գինի նշ փոխակերպեցեր
որ քեզ լեղի այժմ արբուցին. այվու։
Ով չարեաց քահանայք զինչ առ ձեզ
անցուցին. որ փոխարէն զայս մեզ հա
տուցիք զիմ միածինն որ զձեզ կերակ
րեաց. 'ի պիղծ ձեռաց ընդէր տանջե
ցիք. այվու։

Որդեակ հեզութբ խրատած և երկի-
ղիւ դու գաւառ 'ի արարած. այժմ յեր
կաս մերկ 'ի խաչիդ տարածած, և քո
ընդ դէմ զմայրս վշտածաց. այվու։

Ցեգիպտոսաւուր և փախեա 'ի մանկան խող
խող որոյն զերծուցի. և արդ մատունքդ
են արեամբ ներկած. և թքով լոյս կու
րաց դու տուող ինձ օգնել. անկարե
լի. այվու։

Ի յանդամալուծքն հաստատեցեր. զկար
կամեալ ձեռքն բժշկեցեր. և թողեր 'ի
խաչ բարձրացար. ձեռք քո և ոտք
բևեռ հարած. այվու։

Իմ միածին կենդ մեռելոց թքով ժպիր
հրէյայ զքեզ հարին, և յանիծից մահն
մատնեցին։

Ով իմ մխիթար կեանք աշխարհիս կամ
ով օգոյս լին եւ փառաբանիչ. երբ
զմինգ առին յինէն խլեցին հանդէպ ա
չաց իմոց խաչեցին. այվու։

Ո՛վ մարիամ մագդաղենացի այսօր դուլաց
զմայրս յն, որ զիմ որդին տեսի բևեռեալ.
զիւր աշակերտսն երկիր ցրուեալ. այվո՜ւ։
Թող խաւարի ինձ լուսին արեւու Թող
չերեւանի ինձ պարզ աստեղացն. երբ զքեզ
'ի խաչ տեսի բևեռեալ. զգլուխդ խոնար
հաց զհոգիդ աւանդեալ. այվո՜ւ։

Ո՛հ թէ Թողոյր զիս քո մերձ առ խա
չին. ոհ թէ Թողոյր զի քեզ մերձենալ.
զամբիծ ձեռսդ առնուլ համբուրել
զարտասուս ընդ արեանդ խառնել.
այվո՜ւ. այվո՜ւ։

Ա՛ն ողորմ զինուորք ինձ ողորմեցէք,
մինչէ միայն մի յինէն խլէք. տուք զմար
մինդ որ դոյդ զոր սպանիք. զմօրս փո
խանակ որ կամ տատանեալ. այվո՜ւ։

Եկ յոհաննէս եկ որդեակ. և դու 'ի
միածնին սիրոյն աշակերտ, առցուք
զմարմինն ողջագուրեսցուք, և արտասո
ւօք զսա Թաղեսցուք. այվո՜ւ։

Դու միայն որդեակ սիրեցեր միայն ե
զեր դու չարչարակից. այլ աշակերտօքն
Թողին և փախեան. կեր գազանաց զորդ
եակն իմ եսուն. այվո՜ւ։

Ըհա՛ մնացի ես ան մխիթար և որտմու
Թե՛ վշտօք տառապել զի զորս կառս
յուսոյս այսօր գնեմ 'ի գերեզմանի վէմի
փորեալ. այվո՜ւ։

Ոհ թէ տանես ինձ այցելութիւն ուստ
զբանս գու հրեշտակին ան մեղց կոխեալ
զմահ քո բանացեալ. այվու.

Բայց զիս այսօր խաւար պաշարեաց, զի
քեզ տեսի որդեակ բեւեռած. և արդ
վիմօք 'ի տապան կնքեայց. բայց ես յու
սոյ չէղէ թերանաց. այվու.

Յորժամ ալւնաս աթոռն հայրական,
և դարձեալ գաս միւսանգամ, մեզ ողոր
մեա յաւուր յանաքան. յորժամ գնես
ահեղ դատաստան. այվու.

Այլ աւնիմ ես ակն յարութեն որ գու
առնես զաշխարհս նորոգես. զկարգեալ
հոգիքն 'ի բանդէն ազատես քո հայրա
կան փառօք որ աւնիս. այվու.

## Տող տաղէ Ծննդեան.

Լցեալ բանքն այսօր նը մարգա
րէից. ածեալ կ ցուցին զօրն
տոեանն 'ի դատաստանին.

Զեռաւն որ հաստատեաց զկա
մարն երկնային. կապեցին զինուորքն
առաջի այն պեղատոսի.

Բարձեալ զխաչափայտն 'ի վ՛ր յուսոյն.
փուշ պսակ եդին 'ի գլուխ նը թագա
ւորին.

Յայն 'ի գողգոթայ նա՛ բարձրացոյին,
տարածեալ բազուկն 'ի վ՛ր քառաթև
խաչին.

Քացախ և լեղի բերեալ մատուցին · վ՜ն նախահօրն որկորաւ պտուղն 'ի դրախտին ։
Զինուորքն որ կային զկողն խոցեցին · Ջուր և արիւն բխեալ 'ի կողէն զմեզ ա զատեցին ։
Նստեալ մարիամ դէմ քառաթևին · Լայր ողորմագին ծարաւեալ իմ ո՛րն 'ի խաչին ։
Աշխարհս ամ՛ ինձ ողորմեցին · բարձ րացա՛ 'ի խաչ և եղէ ես ողորմագին ։
Ո՛վ պատմէր նոյին կամ նախաստեղ ծին · ով ո՛ք մարգարէք պատմեցէք իմ մօրն և այլ ։
Այն որ ըստեղծ զերկ և զօրսն երկնայինն · այսօր մեռանի 'ի մէջ գողին և աւազակին ։
Թարձր աղաղակէր 'ի կառս խաչին · հա նեալ արձակէր զկապեալ հոգիքն 'ի բանդին ։
Յովսէփ աղէրսէր 'ի պեղատոսէն · հայ ցեմք 'ի քեն զմեռեալ մարմինն 'ի խաչին ։
Մէ ածն երգէր բևեռն կաւքէր · խոնար հեալ հանգեաւ 'ի վէ՛ բաղկացն յովսէփին
Եղբայր ո՛բ յովսէփ արեմաթացին · զա րարիչն ած ես պատեմ նման մեռելի ·
Պատեալ կտաւով զմարմին ան մահին · տարեալ թաղեցին 'ի նոր գերեզմանին ։
Իւղաբերքն եկին խունկս անոյշ բերին ողբալով լային պարառեալ շուրջ գե րեզմանին ։ Յայն

Յայն առաւօտին միայն շաբաթին · լու-
սոյ փայլ հրեշտակն իջեալ ՚ի վէմ վիմին ·
Քաղցրին բարբառեթ ՚ի վէմ վիմին · յա-
րեաւ տէրն յարեաւ մարիամ մի լար քո
զորդին ·

Ո՞վ տեսեալ չիրիմ տուանց մեռելին ·
վարշամակ ծալեալ ՚ի նմա մարմին չերեւին ·
Մարիամ հարցանէր զՏէրն ՚ի պարտիզին ·
ողբալով ձայնէր պարտիզպան · ցոյց
ինձ զիմ զորդին ·

Ձայնէր բարբառնին էր կուլաս դու կին
ես եմ քո որդին որ եդաւ ՚ի գերեզմանին ·
Երթեալ պատմեցէք աշակերտեան գնդին ·
բարձրանամ առ հայր առաքեմ առ ձեզ
Սբ հոգին ·

Փառք հօր անեղին որդւոյն միածնին ·
Հոգւոյն վայելեմք փառք և գոհութն ·

## Աւետարան տն՞ միրոց յն ժէ ըստ մատթէոսի ·

Յայնմ ժամանակի ասաց յս՞ աշա-
կերտաց իւրոց ։ Գիտասջիք զի
յետ երկուց աւուրց զատիկ
լինի · և որդի մարդոյ մատնի ՚ի խաչ ելա-
նել ։ Յայնժամ ժողովեցան քահանայա-
պետքն · և դպիրքն և ծերքն · ժողովուրդ-
եան ՚ի սրահ քահանայապետին · որում
անուն էր

անուանքը կայիափայ։ Եւ արարին խոր
հուրդ՝ զի նենգութեամբ կալցեն՝ զյս̃ և
սպանցեն։ Բայց ասէին մի 'ի տօնի աստ
զի մի խռովութիւն լինիցի ժողովրդեանն
Իբրև եկն յս̃ 'ի բեթանիեա 'ի տունն սի
մոնի բորոտի։ Մատեաւ առ նա կին մի
որ ունէր շիշ իւղոյ ծանրագինի և թա
փեաց 'ի գլուխ նո̃ բազմականին։ Իբրև
տեսին աշակերտքն բարկացան և ասեն։
ընդէր է կորուստ այդ իւղոյդ զի մար
գեր վաճառել զդա մեծագինի և տալ
աղքատաց։ Գիտաց յս̃ և ասէ ցնս̃. զի
աշխատ առնէք զկինդ. գործ մի բարի
գործեաց գայ յիս։ Յայնժամ զաղքատս
ընդ ձեզ ունիք. բայց զիս ո՛չ հանապազ
ընդ ձեզ ունիք։ Արկանել զդայ զիւղդ
'ի մարմին իմ առ 'ի թաղելոյ զիս նշանա
կեաց։ Բայց ամէն ասեմ ձեզ. զի ուր
քարոզեսցի զաւետարանս այս ընդ ամ̃
աշխարհ խօսեսցի և զոր արար դա՛ յիշա
տակի դորայ։ Յայնժամ գնաց մի երկո
տասանիցն անուանեալն յուդայ սկարիո
տացի. առ քահանայապետսն և ասէ։
Զինչ կամիք տալ ինձ. և ես մատնեցից
զնա ձեզ. և նք̃ կշռեցին նմա երեսուն
արծաթի։ Եւ յայնմ հետէ խնդրէր պա
րապ զի մատնեսցէ զնա նց̃։ Եւ յառաջ
նում բաղարջակերացն մատեան աշա

կերտքն

կերտքն առ յն և ասեն ուր կամիս զի
պատրաստեսցուք քեզ ուտել զզատիկն ։
Եւ նայ ասէ ցնա՛ երթայք 'ի քաղաքն
առ այս անուն և ասացէք ցնայ վարդա
պետն ասէ ժամանակ իմ մերձեալ է .
առ քեզ առնեմ զզատիկս աշակերտօքս
հանդերձ ։ Եւ արարին որպէս հրամայեաց
յն . պատրաստեցին զզատիկն ։ Եւ իբրև
երեկոյ եղև կայր բազմեալ ընդ երկո
տասան աշակերտսն ։ Եւ մինչ դեռ ու
տէին . ասէ ամէն ասեմ ձեզ զի մի ոմն
'ի ձէնջ մատնելոց է զիս ։ Եւ տրտմեցան
յոյժ սկսան ասել ցնա՛ իւրաքանչիւր 'ի
նոցանէ . մի թէ ես իմ . նա՛ պատասխա
նի ետ և ասէ որ մխեաց ընդ իս զձեռն
իւր 'ի սակաւառակս նա՛ մատնելոց է . որ
դի մարդոյ . երթայ որպէս գրեալ է վն նորա
Բայց վա՜յ մարդոյն այնմիկ . յոյր ձեռն որ
դի մարդոյ մատնեսցի ։ Լաւ էր նմա՛ թէ
չէր ծնեալ մարդն այն ։ Պատասխանի ետ
յուդայ որ մատնելոցն էր զնա՛ և ասէր , մի
թէ ես իցեմ վարդապետ ։ Ասէ ցնա՛
դու ասացեր ։ Եւ մինչ դեռ ուտէին
'ք է՛ առ յն զհաց օրհնեաց և եբեկ և
ետ աշակերտացն և ասէ ։ Առէք կերէք
այս է մարմին իմ ։ Եւ առեալ զբաժակն
գոհացաւ ետ նց և ասէ ։ Արբէք 'ի դմանէ
ամէն . զի այդ է արիւն իմ նր ուխտի որ
'ի

'ի մէջ բազմաց հեղանի 'ի թողութն մե-
ղաց։ Բայց ասեմ ձեզ. ոչ ևս արբից
յայսմ հետէ 'ի բերոյ որթոյ մինչև ցօրն
այն. յորժամ արբից զդա ընդ ձեզ. նոր
արքայութն հօր իմոյ։ Եւ օրհնեցին և
ելին 'ի լեառն ձիթենեաց։ Յայնժամ
ասէ ցնս յս. ամէն դուք գայթակղելոց
էք յինէն այսմ գիշերի. զի գրեալ է թէ
հարից զհովիւն և ցրուեսցին ոչխարքն
հօտին։ Եւ յետ յառնելոյն իմոյ յառաջե-
ցից քան զձեզ 'ի գալիլեա։ Պատասխանի
ետ պետրոս և ասէ ցնա թէպէտ ամէքն
գայթակղեսցին 'ի քէն սակայն ես ոչ
գայթակղեցայց։ Ասէ ցնա յս, ամէն
ասեմ քեզ զի այսմ գիշերի մինչև հաւու
խօսեալ իցէ երիցս ուրասցիս զիս։ Ասէ
ցնա պետրոս թէ և մեռանիլ հասանիցի
ընդ քեզ. զքեզ ոչ ուրացայց նոյնպէս և
ամ աշակերտքն ասէին։ Յայնժամ գայ
յս ընդ նս 'ի գիւղ մի որում անունն էր
գեթսեմանի. և ասէ ցնս։ Նստարուք
այդր մինչև երթայց կացից յաղօթս։
Եւ առեալ ընդ իւր պետրոս և զերկոսս
որդիսն զեբեդեայ սկսաւ տրտմիլ և հոգալ։
Յայնժամ ասէ ցնս տրտում է հոգի իմ
մինչև 'ի մահ. կացէք աստ և հսկեցէք
ընդ իս։ Եւ մատուցեալ առաջ սակաւիկ
մի անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց. եկաց

յաղօթս

յաղօթս և ասէ․ Հայր իմ եթէ հնար է
անցցէ բաժակս այս յինէն․ բայց ոչ
որպէս ես կամիմ, այլ որպէս դու․ Գայ առ
աշակերտսն և գտանէ զնս քուն և ասէ
ցպետրոս այդպէս ո՞չ կարացիք մի ժամ
արթուն կալ ընդ իս․ Արթուն կացէք և
աղօթս արարէք զի մի անկանիցէք ՚ի
փորձութին հոգիս յօժարէ բայց մար
մինս տկար․ Դարձեալ երկրորդ ան
գամ չոգաւ եկաց յաղօթս յմ և ասէ․
Հայր իմ եթէ հնար իցէ անցանել յինէն
բաժակիս այսմիկ․ ապա թէ ոչ արբից
զսա եղիցին կամք քո․ Եւ եկեալ միւս
անգամ եգիտ զնս քուն․ զի էին աչք իւ
րեանց ծանրացեալք․ Եթող զնս և գնաց
եկաց յաղօթս երրորդ անգամ․ և դար
ձեալ զնոյն բան ասաց․ Յայնժամ գայ
առ աշակերտսն և ասէ ցնս ննջեցէք այ
սու հետև․ և հանգերուք․ զի ահա հա
սեալ է ժամ․ և որդի մարդոյ մատնի ՚ի
ձեռս մեղաւորաց․ Արիք երթիցուք
աստի․ զի ահաւասիկ եհաս որ մատնե
լոցէ զիս․ Եւ մինչ դեռ նա զայն խօ
սէր․ ահա յուդայ մի երկոյ տասանիցն
եկն և ընդ նմա ամբոխ բազում սուս
րօք և բրօք ՚ի քահանայապետիցն և ծերոց
ժողովուրդեանն․ Եւ որ մատնելոցն էր
զնա ետ նշան և ասէ, ընդ որում ես համ

բուրեցից

բուրեցից նա է զնա՛ ունկցէք․ Եւ վաղ
վաղակի մատուցեալ առ յս̅ ասէ․ ողջ լեր
վարդապետ և համբուրեաց ընդ նմա։
Եւ յս̅ ասէ ցնա՛ ընկեր վս̅ որոյ եկիրդ
յայնժամ մատուցեալ արկին ձեռս ՚ի յս̅
կալան զնա։ Եւ ահա մի ոմն յանցանէ
որք էին ընդ յս̅․ ձգեաց զձեռն և եհան
զսուր իւր և եհար զծառայ քահանայապե
տին և ՚ի բաց եհան զունկն նր̅։ Յայն
ժամ ասէ ցնա յս̅․ դարձո զսուր քո ՚ի
տեղի իւր զի ամ̅ք որք զսուր առնու
ցուն սրով անկանիցին․ Թէ համարիցիս․
Թէ ոչ կարեմ աղաչել զհայր և հասու
ցանիցէ ինձ այսր աւելի քան զերկոտասան
գունդս հրեշտակաց։ Այլ զի արդ լնա
նիցին գիրք թէ այսպէս պարտ է լինել։
Յայնժամ ասաց յս̅ ցամբոխն․ իբրև ՚ի
վր̅ աւազակի ելիք սուսերօք և բրօք ու
նել զիս հանապազ առ ձեզ ՚ի տաճարին
նստէի և ուսուցանէի և ոչ կալայք զիս․
Այլ այս ամ̅ եղև․ զի լցցին գիրք մար
գարէիցն․ յայնժամ աշակերտքն ամ̅ն
թողին զնա և փախեան․ Իսկ նք̅ կա
լեալ զյս̅ տարին առ կայիափայ քահանա
պետն․ ուր դպիրք և ծերք ժողովեալ
էին․ Եւ պետրոս զհետ նր̅ երթայր բա
ցագոյն մինչև ՚ի սրահ քահանայապետին․
և մտեալ ՚ի ներքս․ նստէր ընդ սպասա
ւորսն

ւորսն տեսանել զկատարածն ։ Իսկ քա
հանապետն և ամ ատեանն խնդրէին
սուտ վկայութին զյս զի սպանցեն ։
Եւ ոչ գտանէին ի բազմաց սուտ վկայիցն
մատուցելոց , յետոյ մատուցեալ երկու
սուտ վկայք ։ Ասէին թէ սա ասէր
կարողեմ քակել զտաճարն այ և զերիս
աւուրս շինել ։ Եւ յարուցեալ քահանա
պետն ասէ ցնա ։ չտաս ինչ պատասխանի
զինչ դոքա ամբաստանեն զքեն ։ Եւ յս
լռեալ կայր Պատասխանի ետ քահանա
պետն և ասէ ցնա երդմնեցուցանեմ
զքեզ ած կենդանի ։ զի ասասցես թէ
դու ես քսն որդի այ ։ Ասէ ցնա յս դու
ասացեր ։ բայց ասեմ ձեզ ։ այսմ հետէ
տեսանիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ
աջմէ զօրութե և եկեալ ընդ ամպս երկնից ։
Յայնժամ քահանապետն պատառեաց
զհանդերձն իւր և ասէ հայհոյեաց զի
եւս պիտոյ են մեզ վկայք ։ ահա արդ
լուայք զհայհոյութն նր ։ Զինչ հաճոյ է
ձեզ ։ Նք պատասխանի ետուն և ասեն
մահապարտ է ։ Յայնժամ թքին ընդ ե-
րեսս նր ։ և կռփեցին զնա, և ոմանք ապ
տակեցին և ասեն ։ Մարգարեաց մեզ
քսդ , ով է որ եհար զքեզ ։ Իսկ պետ
րոս նստէր արտաքոյ գաւթին մատեա
ւանն աղախին մի և ասէ ։ Եւ դու ընդ

յն գալիլեացոյէիր · Նա ուրացաւ առա
ջի ամենեցուն և ասէ · Թէ ոչ գիտեմ
զինչ խօսիս։ Եւ իբրև ել նա արտաքս
քան զդուռն ետես զնա այլ կին մի և
ասէ ցայնոսիկ որք անդ կային և սա ընդ
յն Նազարացոյէր։ Եւ դարձեալ ուրա
ցաւ երդմամբ թէ ոչ գիտեմ զայրն ։
Եւ յետոյ սակաւ միոյ մատուցեալ որ
կային անդ ասեն ցպետրոս արդար և
դու 'ի նոցանէ ես · քանզի խօսք քո
յայտ առնեն զքեզ։ Յայնժամ սկսաւ
նզովել և երդնուլ թէ ոչ գիտեմ զայրն ·
և իսկոյն հաւ խօսեցաւ։ Եւ յիշեաց
պետրոս զբանն յն զոր ասաց · Թէ մինչև
հաւն խօսեալ իցէ երիցս ուրասցիս զիս ·
և ելեալ արտաքս ելաց դառնապէս։ Իբրև
այգ եղև խորհուրդ արարին ամ քահա
նայապետքն և ծերք ժողովրդեանն վս
յն · սպանանել զնա։ Կապեցին զնա և
տարին գնացին և ետուն 'ի ձեռս պոնտա
ցի պիղատոսի · դատաւորին։ Յայնժամ
տեսեալ յուդայի որ մատնեաց զնա թէ
պարտաւորեցաւ զղջացաւ և դարձոյց
զարծաթն առ քահանայապետսն և ծերս
ժողովրդեանն։ Եւ ասէ մեղայ զի
մատնեցի զարիւն արդար և նք ասեն ·
մեզ չէ փոյթ դու գիտես։ Եւ ընկեց
զարծաթն 'ի տաճարն, և գնաց և չոգաւ
խեղդեաց

լեղատեցաւ։ Իսկ քահանապետիցն ա-
ռեալ զարծաթն ասեն ոչ է արժան ըն-
ունել զայդ 'ի կորբանն. քանզի գինք յա-
րեանն են։ Խորհուրդ առեալ գնեցին այ-
նու զագարակն բրտի 'ի գերեզման օտա-
րաց։ Վ՟ այսորիկ ագարակնայն կոչե-
ցաւ ագարակ արեան մինչեւ ցայսօր։
Յայնժամ լցաւ որ ասացաւ 'ի ձեռն
Երեմիայի մարգարէին. առին զերեսուն
արծաթին գինս վաճառելոյն. զոր առին
որդւոցն Իղի։ Եւ ետուն զն՟ա յագարակն
բրտի. որ՟պ հրամայեաց ինձ տ՟ր։ Եւ յ՟ս
եկաց առաջի դատաւորին, եհարց զն՟ա
դատաւորն եւ ասէ. դու ես Թագաւոր
հրէից։ Եւ յ՟ս ասէ դու ասես։ Եւ 'ի
չարախօսելն նց՟ 'ի քահանապետիցն եւ ծե-
րոց ոչ ինչ ետ պատասխանի։ Յայնժամ
ասէ ցն՟ա պեղատոս. ոչ լսես որ չափ
դոքա՛ հակառակ քո վկայեն։ Եւ ոչ ետ
նմա՛ պատասխանի եւ ոչ բան մի, մինչեւ
զարմանալ դատաւորին յոյժ։ Բայց ըստ
տօնի սովորէր դատաւորն արձակել ժո-
ղովրդեանն կապեալ մի զոր կամէին։
Ունէին յայնժամ կապեալ մի նշանաւոր
որում անունէր յեսու բարաբայ։ Իբրեւ
ժողովեցան ասէ ցն՟ո պեղատոս. զո՞վ կա-
միք երկուց աստի. զի արձակեցից ձեզ
զյեսու բարաբայն. եթէ զյ՟ս անուա-
նեալն

նեալն Ք՛ս. վասնզի գիտէր թէ վասն նա
խանձու մատնեցին. Եւ մինչ դեռ նստէր
ատենին առաքեաց առ նա կինն իւր և
ասէ. Չկայ ինչ քո և արդարոյն այնո
րիկ. զի բազում անցք անցին ընդ իս այ
սօր. յանուրջս վասն նր. Իսկ քահանա
յապետն. և ծերքն հաւանեցուցին զժողո
վուրդն. զի խնդրեսցեն զԲարաբայն և
զՅս կորուսցեն. Պատասխանի ետ դա
տաւորն և ասէ ցնս. զո՞ կամիք զի արձա
կեցից ձեզ յերկուց աստի, և նք ասեն
զԲարաբայն։ Ասէ ցնս պիղատոս իսկ
զի արարից զՅս անուանեալն Ք՛ս։ Ասեն
ամենեքին խաչեսցի։ Եւ նա ասէ զի՞նչ չար
արար. Եւ նք առաւել ևս աղաղակէին
և ասէին խաչեսցի։ Եւ տեսեալ պիղա
տոսի. թէ ոչ ինչ օգնէ այլ առաւել
խռովութիւն լինի. Առեալ ջուր և լո
ւաց զձեռս առաջի ժողովրդեանն. և
ասէ քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ
այդորիկ դուք գիտասջիք։ Պատասխա
նի ետ ժողովուրդն ասէ արիւնն դորա
՚ի վր մեր և ՚ի վր որդոց մերոց։ Յայն
ժամ արձակեաց նց զԲարաբայն. և զՅս
գան հարեալ ետ ՚ի ձեռս զի խաչեսցի.
Յայնժամ զինուորք դատաւորին առին
զՅս յապարանս ժողովեցին ՚ի վր նր զամ
գունդն։ Մերկացուցին զնա և արկին
զնովաւ

զնովաւ քղամիթ կարմիր։ Եւ բոլորեալ
պսակ 'ի փշոց եդին 'ի գլուխ նր, և ե_
ղեգն աջոյ ձեռին նր. 'ի ծունր իջեալ
առաջի նր. կատակէին և ասէին. ողջ_
լեր թագաւոր հրէից։ Եւ թքեալ 'ի նա՛
առնուին զեղեգն և ծեծէին զգլուխ նր։
Եւ յորժամ ձաղեցին զնա՛ մերկացուցին
'ի նմանէ զքղամիթն. և ագուցին նմա՛
զիւր հանդերձն. և տարան զնա՛ 'ի խաչ
հանել։ Եւ ելեալ արտաքս գտին զայր
մի կիւրենացի անուն սիմոն զնա՛ կալան
պահակ. զի բարձցէ զխաչն նր։ Եւ ե_
կեալ 'ի տեղին անուանեալ գողգոթայ.
որ է տեղի կառափելոյ։ Ետուն նմա՛
գինի ընդ լեղեաւ խառնեալ. և իբրև
ճաշակեաց ոչ կամէր ըմպել։ Եւ հանեալ
զնա՛ 'ի խաչ բաժանեցին զհանդերձս նր
վիճակաւ զի լցցի բանն որ ասացաւ 'ի
մարգարէէն, բաժանեցին զհանդերձս իմ
յիւրեանս և 'ի վր պատմուճանի իմոյ
զվիճակս արկանէին։ Եւ նստեալ պահ
էին զնա՛ և եդին 'ի վր գլխոյ նր. գրեալ
վնաս թէ սա է յս թագաւոր հրէից.
Յայնժամ հանին ընդ նմա՛ 'ի խաչ եր
կուս աւազակս մի յաջմէ նր, և մի յահեկէ.
Եւ որք անցանէին հայհոյէին զնա՛ շար
ժէին զգլուխս իւրեանց։ Եւ ասէին վա՛
որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս
շինէիր

չինէ՛ր զնա․ ապրեցո՛ զքեզ և թէ որդի ես Այ էջ 'ի խաչէդ․ Նոյնպէս և քահանայապետքն ծաղրէին հանդերձ դպրօք և ծերօք և ասէին․ Զայլս ապրեցոյց զինքն ոչ կարէ ապրեցուցանել։ Եթէ թագաւորէ Իղի իջցէ այժմ 'ի խաչէդ, և հաւատասցուք զմա։ Եթէ յուսացաւ Ած ի փրկեսցէ այժմ զդա․ եթէ կամի զդա․ քանզի ասաց եթէ Այ որդի եմ․ Զնոյն և աւազակքն որ խաչեալ էին ընդ նմա նախատէին զնա։ Եւ 'ի վեց ժամէ աւուրն խաւար եղև 'ի վր ամ երկրի մինչև ցինն ժամն։ Եւ զիննն ժամուն գոչեաց յս 'ի ձայն մծ, և ասէ․ Էլի էլի․ լամասաբաքթանի․ այսինքն Ածածիմ ընդէր թողեր զիս․ Ոմանք յայնցանէ որ անդն կային․ և իբրև լուան ասէին զէլիա կարդա։ Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն 'ի նոցանէ էառ սպունգ լի քացախով հարեալ յեղէգան ետ ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին․ թող տեսցուք եթէ գայ եղիեայ փրկել զդա։ Եւ յս դարձեալ աղաղակեաց 'ի ձայն մծ և աւանդեաց զոգին․

Սրբ [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible]․ Հայր մեր․

Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ երկուս 'ի վերուստ մինչև 'ի վայր․

երկիր

երկիր շարժեցաւ և վէմք պատառեցան
և գերեզմանք բացան և բազումք մար
մինք ննջեցելոց սրբոց յարեան։ Եւ ե
լեալք 'ի գերեզմանացն․ յետ յարութե
նն մտին 'ի քաղաքն սբ, և երևեցան բազ
մաց։ Իսկ հարիւրապետն և որք ընդ
նմա պահէին զյս․ իբրև տեսին զշար
ժումն և զեղեալսն երկեան յոյժ, և ա
սեն․ արդար և այ որդի էր սա, Էին
անդ կանայք բազումք կային 'ի հեռաս
տանէ և հայէին որ եկին զկնի յն 'ի գա
լիլեէ պաշտել զնա։ Յորս էր մարիամ
մագդաղենացին․ և մարիամ յակոբայ․ և
յօսեայ և մայր որդւոցն զեբեթեա։ Եւ
իբրև երեկոյ եղև եկն այր մի մեծա
տուն յարեմաթեա ուրում անուն էր յով
սէփ որ աշակերտեցաւ իսկ յն, սա մա
տուցեալ առ պեղատոս խնդրեաց զմար
մինն յն․ յայնժամ պեղատոս հրամայեաց
տալ զմարմինն և առեալ յովսէփ պատեաց
նր կտաւով․ և եդ 'ի նոր գերեզմանի զոր փո
րեաց 'ի վիմի և թաւալեցուցեալ 'ի կա
փարիչ դրանն գերեզմանին վէմ մի մեծ
և գնաց․ Անդ էր մարիամ մագդաղենացի
և միւս մարիամ նստէին հանդէպ գե
րեզմանին․ և 'ի վաղիւանդր որ է յետ ուր
բաթուն ժողովեցան քահանայապետքն և
փարիսեցիքն առ պեղատոս, և ասեն տր

յիշեցաք

յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր մինչ կենդանի էր թէ յետ երից աւուրց յառնեմ։ Արդ հրամայեաց զգուշանալ գերեզմանին մինչև ցերիս աւուրս գուցէ եկեալ աշակերտքն գիշերի գողանայցեն զնա՛ և ասիցեն ժողովրդեանն թէ յարեաւ 'ի մեռելոց. և լինիցի յետին մոլորութիւնն չար քան զառաջինն։ Ասէ ցնս՟ Պիղատոս ունիք զօրականս երթայք զգուշացարուք որպէս գիտէք։ Իսկ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին և կնքեցին զվէմն հանդերձ զօրականօքն։

## Մեծ ողջոյն մարդածնին.

Դու ես հայր իմ ո՜ր։
Դու ես ա՟ծ իմ գթած։
Դու ես օգնական իմ ժամու։
Դու ես բժիշկ իմ ամենազօր։
Դու ես սիրեցեալն իմ ամենայն գեղեցիկ։
Դու ես հաց կենդա նի։
Դու ես քահանայ յաւիտ եան։
Դու ես առաջնորդ իմ հայրենիսն քո։
Դու ես լոյս ճշմա րիտ։
Դու ես քաղցրութիւն իմ ո՜ր։
Դու ես իմաստութիւն իմ պայ ծառ։
Դու ես պարզութիւն իմ յիս տակ։
Դու ես միջանին յիմ ընթանարա կան։
Դու

Դու ես միաբանութիւն իմ բոլորովին։
Դու ես պաշտպանութիւն իմ ամենեւին։
Դու փրկութիւն իմ միշտ ընծա ուրբ։
Դու ես հոգի անա բատ։
Դու ես համբերութիւն իմ ամենազօր։
Դու ես կեանք իմ համա պագ։
Դու ես պատարագ իմ ամ բեծ։
Դու ես փրկութիւն իմ ծոր։
Դու ես բժշկութիւն հո գոց։
Դու ես ապաւէն յուսացե լոց։
Դու ես յոյս հաւատացե լոց։
Դու սէր Ճշմարտու թե։
Դու ես պահապանիչ հո գոց։
Դու ես կատաւա րող։
Դու ես խնամա կող։
Դու ես դարմանիչ մարդ կան։
Դու ես զգաւորաց մխիթա րիչ։
Դու ես տրտմեցելոց յոյս։
Դու ես բանդարգելոց յոյս և ապաւէն։
Դու ես աղքատաց ապա ւէն։
Դու ես մեղաւորաց դարձ և զղջում
և քաւութիւն անցանաց. ամէն։

**Խորհուրդ չորրորդութեան է. Ի տա-
նն [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible].**

Սին հայրն մեր. Ծ. ողջոյն մարիամ
ասենք. և խորհիմք առաջին խորհ
ուրդն

ուրդն չարչարանացն քո. էառ երկոտասան աշակերտան ել՝ի լեառն առանձին. և աղօթեաց առ հայր ասելով. հայր եթէ հնար իցէ անցցէ բաժակս այս յինէն.

Մ՛ին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ ասեմք և խորհիմք երկրորդ խորհուրդն չարչարանացն քո. որ յուդայ մի երկոտասանիցն. առեալ զզօրսն՝ի քահանայապետից. սուսերօք և բրօք եկին և կապեցին. և տարան առաջի պոնդացւոյ պղատոսի խաչել վն մեր մեղացն.

Մ՛ին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ ասեմք և խորհիմք երրորդ խորհուրդն չարչարանացն քո. յետ բազում հարցափորձութեանց զինուորացն արարեալ զպսակ՝ի փշոց, եդին՝ի գլուխն քո. որ ընցին արիւնն երեկ յերեսն՝ի վայր վն մեր մեղացս.

Մ՛ին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ ասեմք և խորհիմք չորրորդ խորհուրդն չարչարանացն քո. յորժամ կազմեցին ծանր խաչափայտն եդին՝ի վերայ յուսոյն քո. և տարան մինչև՝ի գողգոթայ խաչել վն մեր մեղացս.

Մ՛ին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ ասեմք և խորհիմք հինգերորդ խորհուրդն չարչարանացն քո. իբրև խաչե

ցին

ցին զմ͞րն յն. և բարձրացուցի 'ի վ͞ն խա
չին. խաւար եղև ընդ ամ͞ աշխարհս.
արեգական և լուսինն խաւարեցաւ վէմք
պատառեցան. և բազում սրբոց գերեզ
մանք բացան և ինն երրորդ ժամին աղա
ղակեաց 'ի խաչին ասելով ա͞ծ ա͞ծ իմ
ընդէր թողեր զիս. խոնարհեցոյց ըզ
գլուխն. և աւանդեաց զհոգին և 'ի ջու
ցին 'ի գերեզմանի.

## Խորհուրդք փառաւորութեան տիրուհւոյ մերոյ սրբոյ կուսին աստուածածնին.

Մին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ
ասեմք խորհիմք առաջին խորհուրդն
փառաւորութ͞ն ք͞ի. յորժամ յարեաւ 'ի
մեռելոց. և երևեցաւ մարիամու և այլ
երկոտասանիցն ամենեցուն։

Մին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ
ասեմք խորհիմք երկրորդ խորհուրդն
փառաւորութ͞ն ք͞ի. յորժամ շրջէր 'ի
վ͞ր աշխարհիս. և իւր ամենակարող զօ
րութ͞ն համբարձաւ յերկինս և նստաւ
ընդ աջմէ ա͞յ հօր.

Մին հայր մեր. Ժ. ողջոյն մարիամ
ասեմք խորհիմք երրորդ խորհուրդն փա
ռաւորութ͞ն. յորժամ ք͞ս համբարձաւ
յերկինս. առաքեաց զհոգին ս͞բ 'ի վ͞ր
առաքելոցն. և լցան հոգով սրբով. և
քարոզեցին ընդ ամ͞ աշխարհս վ͞ն արքայ
ութ͞ենն։

Մին

Մ՛ին հայր մեր . Ժ . ողջոյն մարիամ
առեմք խորհիմք չորրորդ խորհուրդն
փառաւորութեն . յորժամ եհաս ժամա
